

534

1881

83U

C-72

311.9
5-12 O. Ի. ՇՄԻԴՏ.
u
Stylian

ԾԻԾԵՌՆԱԿԻ ԲՈՒՆԸ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Նշխարհիկ Աշխատանքներ — Արժույթներ

1408
35688
3625

2004

ԵՐԵՒԱՆ

Պատկ լրագրի տպարան

1881



55419

საქართველოს

საქართველოს

საქართველოს

საქართველოს

საქართველოს

საქართველოს

საქართველოს

საქართველოს

Дозвелено Цензурю, 3 Апрелья 1881 г. Тифлисъ.

საქართველოს

საქართველოს

საქართველოს

1881



საქართველოს

1880

Ն Ո Ւ Է Ր

Ե Ր Լ Ս Ն Ս Յ

Ս. ԳԱՅԻԱՆԵԱՆ ՕՐԻՈՐԳԱՑ

Միջնակարգ ուսումնարանի

ՍԵՆՈՒՀԻՆԵՐԻՆ

Ի Բ Ե Ն Ց

Վարձուհույ.

1880 թ.ին.

ԾԻԾԵՌՆԱԿԻ ԲՈՒՆԸ

I.

Գետի մօտ, բլրակի վրա, մի ամուսնապարտու կայ զեղեցիկ պատշգամբով, որի երեք աստիճանները այդին են ասնում: Պատշգամբի կտուրի տակ, սիւնեակի վերեւից՝ ծիծեռնակի մի հին բուն է կախուած: Նրան շինել են վաղուց, շատ վաղուց Ամրակտուցեանների հրշակաւոր ցեղակից երկու ծիծեռնակները: Այդ ցեղը ծտերին ու կկուններին միշտ յաղթելովը՝ յայսմի է բոլոր ծիծեռնակներին:

Բունը շինուած օրից մի ուսուց Ամրակտուցեանից անցնումէր միւսին, և

ուրիշ ոչ մի ծիծեռնակ չէր համարձակ-
վում նրան տիրել. ամենն էլ պատու-
մէին այդ ընտանիքին ու նրան տուած
յաստիութեան ճշմարտութիւնը չէին
ցանկանում իրանց վրա փորձել:

Մայիսուայ պայծառ առաւօտ է. ա-
րեգակը արդէն բաւական տաքացնումէ
երկիրը. ձիւնը հալվել է դաշտերից ու
հաղել նշմարելի նորածիլ կանաչը դուրս
է նայում խոնաւ հողի տակից: Մեր
նկարագրած տեղում երևաց նորեկ ծի-
ծեռնակների մի մեծ խումբ, որոնք բշ-
տապումէին դէպ' իրանց բները: Մի
քանիսները ստիպուած էին դուրս քր-
շել անկոչ բնակիչներին — ծտերին. միւս-
ները վիճումէին պապական մի բնի հա-
մար, որ չէին կարողանում իրար մէջ
բաժանել. երրորդները ողբապին ճովո-
ղումէին իրանց վիշար, երբ բները քան-

դուած ու հեղեղուած էին տեսնում:
Բայց քիչ չէին և այնպիսի բազաւոր-
ները, որոնք ամեն բան անխախտ դրու-
թեան մէջ էին գտնում և ուրախ ճր-
փողիւնով ձեռք էին առնում նորից
պատրաստել իրանց առաջուայ բնակա-
րանը:

Ամառատան պաշտօնավարէին մօտ թը-
ռան երկու ծիծեռնակ. մինը մեծ, միւ-
սը փոքր: Հէնց այդ մեծին էլ պատ-
կանումէր այժմ Սմրակտուցեանների
բունը: Բայց լաւ ուշադրութեամբ դի-
տելով՝ ասաց իր ուղեկցուհուն. —

— Այս բունը խախուտ է, սրանում
ես չեմ բնակուիլ:

— Ինչպէ՞ս, մօրաբո՞յր, դուք հրա-
ժարվումէք այսպիսի մի սիրուն և ա-
մուր բնից — հակախօսեց նրան միւսը:
Թէ այդպէս է, ե՞ս նրա մէջ կը մնամ:

— Քեզ էլ խորհուրդ չեմ տայ. անձս, ա՛յ այստեղ, Տէնց մուտքի վրա, կտրանը ճեղք կայ, անձրև գալիս կը կաթի, պատերը կը նամուսցնի և այդպիսով ողջ բունը կը քանդուի:

— Դարդակ բան է՝ ինքնայուսաբար պատասխանեց փոքրիկ թռչնակը — անցեալ տարի էլ, երբ մայրիկիս և եղբայրներիս հետ բնակվում էի այս տեղ, այդ ճեղքը նոյնպէս լուսաւորում էր մեզ: Մենք այդտեղից նայում էինք արեգակին ու թարմ օդ էինք ծծում:

— Դո՛ւ գիտես — պատասխանեց մօրաբայրը, — իսկ ես աւելի լաւ է չեմ ծուլանայ ու մի նոր բուն կը շինեմ:

Ծիծեռնակները բաժանուեցին: Մօրաբայրը թռաւ շինութեան համար մի նոր տեղ ընտրելու. իսկ քեռաղջիկը սկսեց իր հայրենական բունը մաքրել:

Նա գործադրում էր իր կառուցը, իր սուր մազիչներով բարակ ոտիկները, թռչում էր ցեխ բերելու, յարդ ժողովելու, մի խօսքով շատ հոգսերի մէջ էր... Իրիկնաղէմին գործը վերջացած էր: Ծիծեռնակը բնի դրսի վրա, իբրև զարդ, երկու — երեք փայլուն ծղնտա ամրացրեց ու թռաւ մի փոքր հեռուից իր շենուածին նայելով՝ զուարճանալու:

— Ի՛նչ հիանալի բուն է — մտածում էր նա — լայն և արձակ շինուած, կոկ ու հաւասար, ոչ մի տեղից ծակ չը կայ: Նա թռաւ, զնաց իր մարդուն գիմարելու և ճանապարհին պատմեց իրանց բաղտաւորութիւնը:

— Ինչո՞ւ մօրաբայրդ չուզեց նրա նում բնակվիլ:

— Է՛հ, ո՞վ գիտէ, մի յիմար բանի համար, նա կարծում էր, թէ բունը ա-

մութ չէ — տհաճութեամբ պատասխանեց ծիծեռնակը:

II.

Երեք շաբաթից յետոյ արդէն բնի մէջ չորս հատ սիրուն ձուիկներ կային ու մեզ ծանօթ ծիծեռնակը փքուած նստած էր նրանց վրա. իսկ նրա մարդը թռել, գնացել էր ճանճ ու մթղուկ բունելու: Նա միշտ կարծումէր, թէ իր կիներ բաւական կուշտ չէ, թէ չի կարող թխտել իր առաջին ձագուկները:

Այդ օրերում տեղափոխուեցին ամառաւան բնակիչները — հայր ու մայր իրանց եօթնամեայ Քնարիկ աղջկայ և տասնութամեայ Հայկիկ սղջ հետ:

Ծիծեռնակները երկշաբաթեամբ նայումէին նրանց՝ դռան տեղ էլ ճառագոյ՝ իրանց լուսամուտից:

— Է՛հ, լաւ բան չէ, որ այսքան մօտ ենք կենում մարդիկներին — ասումէր հայրը — պատշգամբն էլ այնքան ցածր է, որ մեր բունը պարզ երևումէ:

Դա յայտնի էր իր խիստ վախկոտութեամբ, որի պատճառով էլ սուել էին նրան ձիրթիթ անունը, որ թռչելէ լեզուով նշանակումէ վախլուկ:

— Ինչո՞ւ վախենք մարդկերանցից. մի անգամ էլ աւելի կը նայեն մեր բունին, դրանով էլ մեղանից ոչինչ չի պակսի — և՛ ծիծառահին դուրս հանելով կուլու ձեղքից իր սև ու ողորկ պխիկը՝ համարձակ նայեց աւազով խաղացող մանկիկներին ու բարձր ձայնով ձուլոցեց նրանց — «բարև՛ ձեզ»:

— Մի տե՛ս, տե՛ս, Հայկիկ ջա՛ն, կրտուրի տակին ծիծեռնակի բուն կայ — ուրախացած բղաւեց քոյրը իր եղբորը

— և ի՞նչ ցածր է. աթոռ բերենք մօտիկուց նայենք, հա՞...

— Չէ, Քնարիկ ջան, այդ լաւ բանն է, նրանց կը վախեցնենք, նրանք հիմա թուխս են նստած:

— Թո՞ւխս, ուրեմն նրանք շուտով ճո՛ւտեր կը հանեն: Ա, խ, ինչ լաւ է — ասաց և ուրախութիւնից աւազի վրա թռչկոտաց Քնարիկը. ձիրիթը այնպէս վախեցաւ, որ լեղապատառ ներս քաշվեց ընի ամենախոր անկիւնը:

— Մի՛ վախի, ասումեն քեզ, — անվախ սրտով ասաց կինը, որին Տիտիւիտ (Արագոսն) էին անուանում — քիչ մնաց ձուն կոտրելի, ինձ էլ վայր զցելի ե՛վա՛. ի՞նչ կայ վախենալու: Մանուկները այնքան սիրելի են, այնքան ուրախ են, որ երևի բարեսիրտ էլ կը լինեն և մեզ վատութիւն չեն անի:

— Մի՛ բարկանա վրաս, Տիտիւիտ, հինց որ մի օտար բան եմ տեսնում, ախմայ սիրտս դող է ընկնում: Ես ինքս չեմ կամենում վախենալ, բայց որ թեւերս իրանք իրանց դողումեն, ոտներս թուլանումեն, աչքերս մթնում... ես ի՞նչ անեմ:

Տիտիւիտը բարկացած շուռ տուեց երեսը ու սկսեց նայել մանուկներին: Նա միշտ ամաչումէր իր մարդու վախկոտութեան համար: Զգումէր, որ ինքը պատկանումէր Ամրակառուցեաններէ ցեղին. իսկ Ամրակառուցեանները միշտ յայտնի են եղել իրանց անվեհերութեամբն ու համարձակութեամբը:

III.

Ճուտեր հանելու ժամանակն արդէն հասել էր: Տիտիւիտը դեռ անաւօտար

նկատել էր, որ ձուրիկներից մինը ճա-
քել էր: Նա ահանջ էր դնում. — մի
փոքրիկ թոյլ կաուցիկ ներսից կտարու-
մէր կճեպը: Նրա մայրական սիրտը
սաստիկ բարասխումէր:

Այս բոլորում ձիւրիկը բնի մօտ
թռու մի երկար ու չաղ ճիճու կաու-
ցին բռնած:

— Սպասի, սպասի — ձայն տուեց նը-
րան ծիծուհին. — Տիմա ուտելու ժամա-
նակ է, մեր ձուտերը դուրս գալու վը-
րա են: ձիւրիկը շտապով կուլ տուեց
ճիճուն ու զգուշութեամբ բռնը մտաւ:

Տիտիտը իսկոյն կճպեց ձուն, և այն
տեղից երեւաց մի պատլիկ, շատ պտու-
ղիկ ու տկտրիկ գլուխ, ուր հազիւ թէ
մի ամենածիճաղելի կերպով տեղ տեղ
բուսած աղուամաղ էր երևում: Մայրը
իր նախածնին թևով ծածկեց:

Միւս ձուրիկում էլ նոյնպէս արդէն
լավումէր մի թոյլ թիկթիկոց, պէսք
էր ընտանիքի այդ նոր անդամին էլ
օգնել. . . Դուրս եկաւ շուտով երրորդ
ձուտիկն էլ: Միայն չորրորդ ձուրիկն էր,
որ մնումէր անշարժ և անձայն:

— Այս ի՞նչ բան է — սկսումէր ան-
հանդատանալ Տիտիտը — չը լինի նը-
րան շատ չեմ տաքացրել և նա մեռել
է, և սիրտը ցաւազնաբար մրզու-
մէր:

— Երեւի այդպէս է. — պատասխանեց
ձիւրիկը, պէտքէ է նրան դուրս շար-
տել:

— Չէ, դեռ սպասի, նստի նրա վրա,
մինչև ես մաքրեմ ու պարկեցնեմ մեր
ձագերին: ձիւրիկը հնազանդուեց: Տի-
տիտը կաուցով ամեն մէկին հերթով
լաւ մաքրեց, նախածնին մանաւանդ ա-

ւելի քնքշաբար ծածկեց փափուկ բրբ-
դով սա շատ ամրակազմն էր, սրա-
տես և, որ գլխուսորն է, մի շատ զե-
ղեցիկ երկար ու սուր կտուց ունէր:

- Սա իսկ ամրակառուց է - մտածեց
մայրը, յետոյ նստեց ձիւրիթի աեղը.
Իսկ ձիւրիթը շտապեց թռչել իր ճու-
տերի համար մոծակ ու մթեղ բերելու,
որ զարթնելուն պէս կերակրի նրանց:

Մայրը շարունակ նստած էր ձուիկի
վրա և անդադար սպասումէր, որ այդ
էլ ճեղքուի, և ի՛նչ յանկարծ նա
լսեց կտուցի կճեպին թխկթխկացնե-
լու թոյլ, բայց չափաւոր, ձայնը:


- Վերջապէս սպասելիքս ահա կա-
տարուեց - ուրախացած մտածեց նա և
օգնեց չորրորդ ճուտիկին ևս դուրս
գալ կճեպից:

- Ա՛յ, ա՛յ, ա՛յ, ինչքան թո՛յլ ես -

ասաց խղճալով մայրը իր նորածին
աղջկանը մաքրելով: Բայց որ սա էլ
աղջիկ է - միիթարումէր ինքն իրան.
- լաւ է, որ ամենքն էլ աղերք չեն:

Վերադարձաւ ձիւրիթը. Տիտիւտը
ընդունեց նրանից կերակուրը, լաւ ման-
րեց, թքով փափկացրեց ու սկսեց իր
կտուցից կերակրել ձագուկներին: Սը-
րանք լայն բացումէին դեղին ու մեծ
բերանները և ազահաբար կլանումէին
կերակուրը, իսկ ամենից շատ՝ նախա-
ծինը: Սա ոտի տակ տալով իր եղ-
բայրներին հէնց առաջ էր ընկնում և
աշխատում, որ ամենից երկար մեկնի իր
վիզը ու հերթից դուրս խլի ուրիշե
բաժինը: Մայրը մեծ դժուարութեամբ
էր կարողանում իր չարածրճիկ աղին
սանձել ու կերակուրը հաւասար բա-
ժանել: Սկայնը խղճուկ ու թոյլ դըս-

1107
3625
35688



արիկը համարեա՛ թէ ուսելու ցանկու-
 թիւն է՛ր յայտնում— մայրը զօռոյ էր
 պատառը նրա բերանը խրում. բայց
 երկու երեք պատառ ուտելուց յետոյ,
 յոզնեց և աչքերը խփեց: Ողջ այս
 առաջին օրը անցաւ հոգսերի մէջ.
 պէտք էր կճեպները դուրս ածել, ձա-
 գուկների համար փափուկ անկողին
 պատրաստել, մի քանի անգամ կերակը-
 րել, նանիկ ասել ու թևերի տակ տա-
 քացնել: Առաւօտը բոլոր հոգսերը
 կարգի ընկան և էլ այնպէս նոր էին
 թւում: Թէ մայր և թէ հայրը ընտելա-
 ցան իրանց պարտականութիւններին ու
 դեռ շատ պարսպ միջոց էլ էին ունե-
 նում իրանց ձագերի քնած ժամանակը:
 — Ի՞նչ անուններ դնենք մեր ճու-
 տերին— հարցրեց ձիրիթը:
 — Ես արդէն գտել եմ. առաջինի ա-

նունը կը դնենք «Քաջիկ», նա շատ
 կարուկ է. երկրորդինը «Գեղանի», ասե-
 ի՛նչ սիրուն օտիկներ ունի, ի՞նչ գեղե-
 ցիկ աչքեր ունի. երրորդինը «Ուրախ»,
 նա ամենից շատ է ճլլլում ու ճուլողում:
 Իսկ իմ խղճուկ ու փոքրիկ դստրիկիս
 կ'անուանենք «Թոյլանոյշ»:

IV.

Անցաւ երկու շաբաթ: Չափուկները
 ծածկուեցին խիտ ու փափուկ աղուա-
 մազով: Նրանց վրա տեղ տեղ սխե-
 ցին փետուրներ երևալ: Արդէն կարո-
 գանումէին միտեսակ ճուլողել, որը շատ
 լաւ էր հասկանում մայրը:

Մի անգամ, գիշերը Տիտիւիտը զար-
 թլնեց պատշգամբի կաուրով անցնող
 անսովոր ոտնաձայնից. ծածուկ նայեց

Ճեղքից և սառեց սարսափից: Ճեղքի մօտ փայլումէին հարեան տանից եկած մտերապոյն մեծ կատուի աչքերը: Ինչքան էլ որ քաջ էր Տիտիւիտը, բայց ազահուլթիւնից փայլող այդ աչքերի մօտ, գիշաաբար ցցուած բեղերի ու սրած ատամների մօտ կորու նրա բուրբ քաջութիւնը. նա սարսեց բոլոր մարմնով. նա ճչաց ողբազին: Ճիրիթը արթնեց ու կատուին տեսնելով՝ բորբովին շփոթվեց, ուզեց թռչել բնից. բայց Տիտիւիտը արգելեց. —

— Իսկ ձագերդ. դու մոռացել ես, որ մենք պէտք է նրանց պահպանենք ու խնամենք: Ես երբէք չեմ թռչի, թո՛ղ այդ սոսկալի գազանը ինձ էլ կլանի իմ թանգ ձագուկների հետ:

Կատուն երկար ժամանակ կանգնեց ճեղքի մօտ և վերջապէս սկսեց այն-

տեղից կամաց կամաց իր սրածիրան թաթը ներս մտցնել:

Տիտիւիտը սարսափած՝ տարածեց թևերը ձագուկների վրա: Ճիրիթը ուշաթափ՝ ծածկուեց իր կնոջ մէջքի միւս կողմը, սլինդ կծկուեց ու խփեց աչքերը. իսկ կատուն թաթը աւելի խորն էր ներս տանում. ճանկեց բնի ծեփից ամբողջ կաուրը ու թաթը յետքաշեց... մի բան թրմբաց. հին ցեխը չը դիմացաւ, ճեղքի կաթուածներից խոնաւացած տանիքը վայր գլորվեց և ամբողջ բունը ծնողների ու ձագերի հետ միասին ցած ընկան: Չար կատուն բնի փլվելուց այնպէս վախեցաւ, որ պոչն իրան քաշեց ու փախաւ:

Խեղճ հայր ու մայր: Նրանք մի կերպ դուրս եկան փլտտակների կոյտերի տակից ու դառնապէս գանգատվումէին ի-

— Երևի վայր է ընկել — ասաց Հայկիկը:

— Ա՛յ, տե՛ս, լսումես, ճուտիկներն էլ, կարծես թէ, ճիճվումեն — և նա սկսեց ուշադրութեամբ որոնել խոտի մէջ բնի կախուած տեղի մօտ: Քնարիկը դադարեց լալուց և օգնումէր եզբօրը:

— Ա՛յ բունը — ուրախացած ասաց եղբայրը — բոլոր ձագերն էլ կենդանի են. մէկ, երկու, երեք...

— Ուրեմն բոլորը չեն — տխուր թոթովեց Քնարիկը, դրանք չորս էին, ես դրանց համարել եմ գլխները դուրս հանելիս. —

— Դէ չորրորդին էլ փնդուենք — ուրախացած ասաց Քայկիկը, — դեռ դու գնա՛ բամբակ բեր, նրանց հարկաւոր է փափուկ տեղ, սրանք մրսումեն. Քնարիկը խսկոյն վազեց մօր մօտ ու մի րո-

պէից յետոյ բամբակի մի մեծ բուլայ բարշ տալով գալիս էր. —

— Պահ, բո սունը շինվի — ծիծաղելով ասաց Հայկիկը — այդ երեք բուն էլ կը շինի: Տե՛ս սրանք ինչքան փոքր են, սրանց դրա կէսն էլ կը բաւականանայ:

— Իսկ չորրորդ ձագը — հարցնումէր Քնարիկը. —

— Չը գիտեմ, դեռ չեմ գտել, դեռ սրանց պարկեցնենք. տե՛ս ինչպէս դողումեն: Քնարիկը բամբակի մէջ փաթաթած թռչնիկներին դրեց իր ծրնկան վրա ու լուռ և անշարժ նստեց:

— Հը՛, ձեռք մի՛ սալ դրանց — նկատեց բրոջը Հայկիկը, տեսնելով Քնարիկին բամբակը բարձրացնելիս — գէ, չը չարչարես, հա՛...

— Չ'է, ձեռք չեմ տալի, միայն ուղումեմ նրանց նայել . . .

Հայկիկը խոտի մէջ ամեն տեղ որոնումէր. բայց ոչ մի տեղ էլ չէր երևում չորրորդ թռչնիկը:

— Ի՛նչ մեծ թիւեր ունեն — Հայկիկ. ի՛նչ դեղին բերաններ, լեզու էլ ունեն. իսկ աչքները, աչքները ինչպէս փայլումեն, ստիկներն էլ ինչ մանր են, թեւերը կա՛րձ, շատ կարձ ու պո՛չներն էլ դեռ դուրս չեն եկել . . .

— Առ է, լա՛ւ. — բարկացած խօսքը կարեց Հայկիկը: Սրա բարկութիւնը գաղես էր, որ չորրորդ ձուռը չէր զբարնվում: Պեռ յետոյ կը նայենք. ի՛նչ ես պատում, չես թողում լսեմ. այստեղերքից, կտրձես, ծվծվոցի ձայներ թռան ականջիս . . .

— Ի՛նչ է եղել նա՛, ա՛խ: Բայց դու

ուղի՞ղ ես համարել, կարելի է նրանք երեք հատ էին:

— Չ'է, ես համարել եմ, նրանք չորս հատ էին . . .

Յանկարծ պատշգամբի տակից մի թոյլ ճվճվոցի ձայն լսեց: — Ա՛յ, ահա թէ նա որտեղ է ճչում — ասաց Քնարիկը:

Հայկիկը վրա վազեց դէպի այն կողմը. ձեռքը մեկնեց աստիճանի տակի ճեղքով ու դուրս հանեց թոյլանուշին:

— Ի՛նչ փոքր թռչնիկ է — նայումէին մանուկները — ամենից փոքրն է: Իսկ նա, նա ի՛նչ կուվարարն է. տե՛ս մատու էլ կծեց. ա՛յ, սա այնքան ողորկ է. արդէն բաւական սոչ էլ ունի. բայց ինչ տեսակ, տեսակ են — մտածելով խօսեց Քնարիկը: Երբ թռչնակներին մօտից չես նայում՝ բոլորն էլ միանման են ե-

րեում: իսկ այ, ահա մօտիկուց երևումէ, որ չէ, ամեն մինը իր առանձին կերպարանքն ունի:

— Այ՛. կարճ պատասխանեց Հայկիկը. նա շատ խօսել չէր սիրում: Դէ հիմա սուր ինձ ես նրանց պահեմ. իսկ դու ճանճ ու մոծակ բռնի, որ սրանց կերակրենք:

— Եւ դու մտքումդ դրել ես, որ մե՞նք մեծացնենք դրանց, հա՛, Հայկիկ ջա՛ն, հիմա մե՞նք կը մեծացնենք, հա՞. չէ՞ որ նրանք հայր ու մայր չունեն, որք են:

— Այ կը տեսնենք, դեռ դու մի մոծակ պահ:

Քնարիկը մի մոծակ բռնեց:

Հայկիկը վեր առաւ մոծակը ու փոքրիկ թռչնակների կտուցներին մօտացրեց. բայց ճագերից և ոչ մինը, անգամ և Քաջիկը, չէր վստահանում մոծակին

մօտենալ. նրանք ամենն էլ սաստիկ վախեցել էին, մարդիկներին իրանց այնքան մօտ տեսնելով: Բամբակում, ճրճմարիտ է, նրանց համար տաք էր, բայց ի՞նչ կանեն դրանից յետոյ: Պակաս չէր վախում և դրանց մայրը: Սա հարիւր անգամ թռչկոտաց իր ճուտիկների գրկինների վրայով սուր ճուփողիւնով. նա տում էր մօտակայ ճիւղերի վրա ու ծածուկ նայում էր երբեմն այս և երբեմն այն կողմից:

— Չեռք մի՛ք տայ իմ մանկիկներին — ճուփողումէր նա — մի՛ք սեղմի նրանց, ա՛խ, մի՛ք սեղմի, վայր չըզցէ՛ք, դրէ՛ք մի տեղ, մի՛ք վերցնի՛...

Բայց մանուկները չէին հասկանում նրան և սկզբում անգամ չը ճանաչեցին էլ: Միայն երբ նա արդէն նրանց շատ մօտիկ էր թռչկոտում, այնպէս որ հա-

մարեա թէ թեաճարեց էլ, Հայկիկը բարձրացրեց գլուխը և ասաց.

— Այ, աճա սա մայրն է. տեսնումե՞ս ինչ ցած է թռչում, այս անպատճառ մայրն է: Ի՛նչ լաւ կը լինէր, որ մի բուն շինէինք նրանց համար, մայրը ինքը կը կերակրէր, թէ է՛տրանք դեռ ևս փոքր են, ձեռքից կերակուր էն վերցնում:

— Ա՛խ, հա՛, Հայկիկ ջան, ի՛մ հագի, մի հնարք արա, այդ շատ լաւ կը լինէր:

— Մի օրան տես է՛, բոլորը ե՛ս, իսկ դ՞ուր ինչացու ես — կիսակատակ և ինքնագո՛ճ կերպով ասաց Հայկիկը: Յետոյ մի փոքր մտածելուց յետոյ՝ սկսեց լսել ձայնով նախապճել. —

— Առաջ հարկաւոր է, որ բունը կախուի առաջուայ տեղից. երկրորդ, որ նա լինի յարմարաւոր. երրորդ որ լինի

տար... Ը՛հ, սպասի՛ր դտել եմ... բե՛ր լուսով քո կողովեկը, որով պաղաճատեր ժողովելու ես գնում — այնտեղ բամբակ կը դնենք, մի մեծ կեռ մեխ կը խփենք բնի առաջուայ տեղից ու կը կախենք կողովեկը ճուտիկներով — մայրը անպատճառ նրանց մօտ կերթայ:

VI.

Ասացին ու կատարեցին: Կէս ժամից յետոյ ճուտիկները կախուած էին առաջուայ տեղից ու շատ զարմանում էին իրանց այդ նոր բնակարանի վրա: Նրանք դուրս էին հանում երկար վըզները, մինը միւսի վրա թռչաւում ու հազիւ թէ է՛ին ճխլաւում խեղճ թոյլանուշին: Մանուկները մի անկիւն քաշվեցին ու սպասումէին թէ ինչ կը լինի վերջը:

Տիտիւիտը անհանգստութեամբ հե-
տամտումէր բոլոր պատրաստութիւննե-
րին. բայց երբ կողովիկը թռչնակներով
ամուր կախուած էր օդում, նրա մայ-
րական սիրտը չըղիւսացաւ. նա պարտ-
վեց, պտտվեց օդում ու նետի պէս սրա-
ցաւ կողովիկի վրա բերնում ճանճից
պատրաստած կերակրով:

— Մայրի՛կ, մայրի՛կ, — ճիճվումէին ձա-
գերը — սոված ենք, շո՛ւտ, շո՛ւտ... Մայրը
բոլորին էլ հաւասար բաժին տուեց ու
նորից, արդէն այս անգամ անվախ ու
համարձակ, սլացաւ կերակրի:

— Տեսա՞ր — շրշնչաց կայտառ Հայ-
կիկը:

— Սո՛ւս կաց, սո՛ւս կաց, նա էլ լի գա-
լիս է — արգելեց նրան Քնարիկը...

— Դէ՛, հիմա մեր թռչնակները ա-
զատուած են — ազատ շունչ քաշելով

ասաց Հայկիկը, — գնանք թէյ խմելու:

Օրը մի քանի անգամ գալիս էին
մանուկները նայելու. — մայրը միշտ կամ
նստած էր լինում կողովում կամ թրու-
չումէր կերակրի: Մեծերն էլ էին գա-
լի նայելու հնարագէտ Հայկիկի շինած
բնին. սա էլ շատ էր հպարտանում իր
դասած դիւտով: Երեկոյեան մօտերին
կատուն դարձեալ սկսեց անց ու դարձ
անել կտուրով. Քնարիկը այդ խփոյն
նկատեց — Հայկի՛կ, Հայկի՛կ, մի դէնը
մտիկ տուր է՛, մեր հարեւանի կատուն
կարծես ուզումէ թռչուններին մօտե-
նայ:

— Ա՛յ, անիծուած... փնթփնթաց
կատուի վրա, քարահալած անելով նը-
բան: Ա՛յդ երեւի հէնց դա էր արել,
թէ չէ ինչո՞ւ պիտի բունը քանդուէր:
կատուն ծածկուեց. բայց մի փոքր ժա-

մանակից յետոյ, երբ Հայկիկը հեռացաւ, կառուրի միւս կողմից նորից երեւաց:

— Տէ՛ս, Հայկի՛կ, կատուն էլ ի գալիս է:

— Ես կը բռնեմ՝ գրան կը կախեմ— բարկացաւ Հայկի՛կը: Սա մուտցել էր, որ գրանից մի քանի օր առաջ ինքն էր կերակում այդ կատուին, բայց հիմա նոր սիրելիները կարեցին բոլոր միւս կապերը, և կատուի բանը բարձր կր լինէր, եթէ նա քանի շուտ էր գլուխը չառնէր ու փախէր:

— Գիտես ինչ անե՞նք, Քնարիկ, գիշերը կողովիկը մեր սենեակը ամանք. իսկ առաւօտը շատ շուտով նորից կը կախենք. մի գիշերուայ մէջ նրանք չեն մեռնիլ, իսկ թէ որ կատուն մօտենայ, բանները շատ վառ կը լինի:

— Իսկ մայրը՞.

— Է՛, մայրը առանց նրանց մի կերպ կանցկացնի գիշերը:

Այդպէս էլ արին: Տխախտար սաստիկ անհամոզիտ էր, երբ ճուտիկներէն սենեակն էին տարել. ամբողջ գիշերը չը քնեց:

Բայց հետեւեալ առաւօտը վեց ժամին արդէն Հայկիկի ինդրին համաձայն նրա հայրը, որ վաղ էր զարթնել— կախել էր թռչնիկներին: Կատուն առաւօտեան չէր վատահամուժ երևալ, որովհետև վախումէր պատշգորի մօտ շարժող մարդկերանցից, թէև էլ մի քանի անգամ հեռուից վիզը երկարացրնելով և հոտոտելով՝ փորձեց մօտենալ քնին. — անց ու դարձողների աղմուկը ամեն անգամ էլ խանգարում— արգելում էր, և նա յետ էր փախչում:

Տիտիւտը շատով ընտելացաւ իր այդ նոր վեճակին ու բոլորովին դադարեց Հայկիկից ու Քնարիկից վախենալուց. նա համբերութեամբ սպասումէր առաւօտեան իր բնի դուրս բերելուն և իսկոյն շտապումէր ձագերին կերակրելու: Ճուտերը մեծանումէին ոչ թէ օրերով, այլ ժամերով. Քնարիկն էլ շատ էր սիրում նրանց զննելով պարապելը: Քաջիկը յաճախ յաճախ կռիւ և աղմուկ էր գցում: այդ ժամանակ նրանք ամենաժիճազելի կերպով իրար ոտնատակ էին տալի ու մի քանի անգամ էլ Գեղանուն կողովից վայր էլ գցեցին. բայց հիմա սա էլ այնքան մեծ վնաս չէր պատճառում—նրանց թևերը բաւական բուսել էին և ընկնելուս

Գեղանին կարողանումէր նրանցով օդի մէջ պահպանուել այնպէս, որ չէր վրնասվում:

Սի առաւօտ Քնարիկը համարելիս մինը օրակաս գտաւ:

— Ա՛խ, այս ո՞ր է, կատուն հօ չե՞ կերել—ասումէր անհանգստութեամբ:

Բայց ի՞նչ քան ուրախացաւ, երբ տեսաւ, որ բարձրից մի դեռահաս թռչնիկ ճախրեց: Աւելորդ է ասել, որ դա Քաջիկն էր:

— Հայկի՛կ, Հայկի՛կ, կանչեց դատրիկը—ճուտերից մինը արդէն թռչումէ:

— Ի՞նչ ես ասում, մի՞թէ— զարմացաւ Հայկիկը:

— Հա՛, հա՛, ես ինքս տեսայ, այ ահա այն մինն էլ է ուզում թռչի:

Եւ արդարև Գեղանին իր եղբօր նման թափ է թափ էր անում իր նա-

բարոյս թեւերով և հազիւ հազ բնի վրա
բարձրացաւ Է Համարձակ, մի
վախի, պինդ թեւահարի» գոռումէր
մայրը, նրա չորս կողմը պատկերով, և
թռաւ մօր ու քաջիկի կանեից. — մի
քանի րոպէից յետոյ նրան հեռեց
և Ուրախը. բնում մնաց միայն Թոյլա-
նուշը:

— Բայց այս խեղճը ինչո՞ւ չի թըր-
չում-հարցնումէր Քնարիկը . . .

— Չը գիտեմ, երևի, տկար է, պա-
տասխանումէր Հայկիկը:

Թոյլանուշը առողջ էր, նրա թե-
ւերն էլ դուրս էին եկել, հենց այն
էր որ, նա այնպէ՛ս էր սովորել իրան
Թոյլ համարել, որ սիրա չէր անում
օդի մէջ ընկնել:

Մայրը դրա համար նախատումէր
նրան:

— Եւստ որս, թուչիլ սովորի, ասում
էր նա, մինչև տեսար ցրտերը վրա
առեցին, կը համնի տեղափոխելու մի-
ջոցը, իսկ ճանապարհում ժամանակ չի
լինի քու նազովը գնալա, ընկերներիդ
չես համնիլ, կէս ճանապարհին կ'ըմնաս
ու կրտաւես: Դու չես առաջինը . . .
Թոյլանուշը սիրա արեց և շուտով այն
պէս սովորեց, որ եղբայրներից ոչինչով
պակաս չէր թուչում:

VIII

Է՛Տ, Քնարիկ ջա՛ն, ասումէր Հայկի-
կը դարդակուած կողովն նայելով, շու-
տով մեր սիրունիկ ձագերը մեզանից կը
հեռանան. է՛Տ, ի՛նչ շուտ ամառն անցաւ,
էլի նորից պիտի գան ուսում, վարժա-
տան, ուսուցիչներ: Ա՛յո, երանի քեզ,
որ դեռ տաննես սովորում: . . .

— Մեր թռչնակներն էլ արձակուրդներ ունին, հա՞. ծիծաղելով ասաց Քնարիկը: Ասում ես նրանք կերթան ապր երկիրներ, ուր որ միշտ գարուն և ամառ է, հա՞...

— Հա՛, միայն նրանք շատ հեռու պիտի թռչեն, ոչ թէ մեզ նման, որ մի ժամից յետոյ՝ իսկոյն քողարն ենք հասնում, տանն ենք լինում...

Մանուկները խոր մտածմունքի մեջ ընկան. լուռ ու մունջ աւագն էին փորփորում. իսկ մայր – ծիծեռնակը մտակայ ոտտի վրա նստած՝ իր շորհակալութիւնն էր ճուփողում, որ այնքան օդնեցին իր ճուտերի կերակրելուն և մեծացնելուն... միայն Հայկիկն ու Քնարիկը չէին հասկանում նրա ասածը..

— Հայկիկ ջա՛ն, տեսնես որ եկող տարի էլ կողովիկը այստեղ կախենք

մեր ծիծեռնակները կը գնա՞ն այնտեղ բնակվելու:

Ե՛, այդ արդէն չը գիտեմ. բայց կարելի է փորձել, մանաւանդ հայրիկն էլ կամենումէր կրկին վարձել միենոյն այս ամառատունը:

Թէ փորձեցին արդեօք մանուկները և գարձեալ նրանց մօտ թռան ծիծեռնակները թէ չէ, մենք չը գիտենք ու դրա համար էլ չենք կարող նրանց վիճակի մասին տեղեկութիւն տալ ընթերցողներին:



Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page. The text is arranged in several lines and is difficult to decipher due to its low contrast and the paper's texture.



534

0004685

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0004685

